խմբագրական

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

ՆՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ՝ ՀԻՆ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՄԲ

Նրանք, կարծես, հանձնում են Ղարաբաղը

Հայաստանում եւ Ադրբեջանում կայացած յուրաքանչյուր ընտրությունից հետո երկու երկրների քաղաքական ընդդիմությունը եւ իշխանությունը հայտնվում են ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման նոր շրջափուլում: Ընտրական կրքերից չհանդարտված՝ հասարակական-քաղաքական շրջանակները կանգնում են խաղաղ կարգավորման պահանջներին դեմհանդիման: Հանգամանք, որ էլ ավելի է սրում ներքաղաքական փխրուն իրավիճակը երկու երկրներում էլ:

Եվ յուրաքանչյուր նոր ընտրությունից հետո այդ պահանջներն ավելի ու ավելի կտրուկ են հնչում: Ավելին՝ գործող իշխանությունների կողմից դրանց ձգտումներն ու քայլերը հանգեցրել են իշխանափոխության երկու երկրներում էլ:

Բացառություն չէ եւ 2003 թվականը, որը ընտրական տարի է թե Հայաստանի, թե Ադրբեջանի համար: Եթե Հայաստանի խայտառակ ընտրությունները մնացել են ետեւում, ապա Ադրբեջանում դրանք կավարտվեն ընդամենը 20 օրից, ենթադրվում է, որ դրանք կլինեն նույնքան խայտառակ:



Ադրբեջանի նախագահի ընտրությունից հետո ողջ սրությամբ երկու երկրների քաղաքական իշխանության առջեւ կագնելու է հիմնախնդրի կարգավորման՝ համանախագահող երկրների պահանջները:

Ի տարբերություն նախորդ ժամանակահատվածի՝ այս անգամ, թվում է, համանախագահները վճռական են տրամադրված: Փարիզյան եւ քիվեսթյան սկզբունքները վերածեւված են այն աստիճան, որ, ճշմարտությունից հեռու չէ այն պնդումը, թե դրանք գրեթե չեն արծարծվում:

Խաղասեղանին են դրված «նոր սկզբունքները», որոնք այլեւս առանձգական չեն այն աստիճան, որ կողմերը կարողանան դրանք մեկնաբանել ըստ սեփական հայեցողության եւ նպատակահարմարության: Վերածեւված սկզբունքներն այս անգամ խիստ որոշակի են: Դիվանագիտական աղբյուրներին մոտ կանգնած անձինք նշում են մինչեւ անգամ, որ համանախագահողների միջեւ առկա տարաձայնությունները, որոնք էլ հաճախ հնարավորություն էին ընձեռում կողմերին խուսափել վերջնական կարգավորումից, այս անգամ եթե նույնիսկ առկա են, ապա մի կողմ են դրվում՝ հիմնախնդրի կարգավորման ակնկալիքով: Հանանախագահողների միջեւ փոխզիջում այս կամ այն չափով կայացել է, ամենամեծ խնդիրը նրանց համար մնում է հասարակական կարծիքը, որը հաճախ փոշիացնում է կարգավորման նրանց հույսերը:

Նոր սկբունքների կենսագործման արդյունքում Հայաստանը եւ Ադրբեջանը հայտնվում են ելման կետում:

Շարունակությունը՝ 3-րդ էջում

խմբագրական

ՆՈՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ՝ ՀԻՆ ԱԹԵԹԱՎՈՐՄԱՄԲ

Սկիզբը 1-ին էջում

Եվ եթե Ադրբեջանի համար դա միջազգային կարգավորման հնարավոր, թեպետ ոչ ցանկալի արդյունքն է, ապա Հայաստանի եւ Ղարաբաղի համար այն ոչ միայն անցանկալին է, այլեւ ծեռքբերումների փաստացի կորուստ է: Նոր սկզբունքերի մշակման եւ իրականացման բարոյահոգեբանական հիմքը հաշվարկված է. Հայաստանում շատերն են թեւաթափ, Ռոբերտ Քոչարյանը հասցրեց իր կառավարման 5 տարիների ընթացքում սեպի նման կանգնել Հայաստանի եւ Ղարաբաղի միջեւ, իսկ Ադրբեջանը սկզբում թղթի վրա, ապա մաս-մաս կստանա Լեռնային Ղարաբաղը: Պատերազմ հազիվ թե վերսկսվի, ըստ համանախագահողների հաշվարկների՝ ոչ Հայաստանում, ոչ Ադրբեջանում, ոչ Ղարաբաղում պատերազմ չեն ուզում, եթե անգամ սպառնում են պատերազմով:

Որոշ լուրերի համաձայն, որոնց իսկությունը դժվար է հաստատել կամ հերքել, հիմնախնդրի կարգավորման նոր սկզբունքների մասին փաստաթուղթն արդեն ստորագրվել է երկու երկրների արտգործնախարարների կողմից, մնում է նախագահների ստորագրությունը:

Սակայն վերադառնանք սկզբին: Այնտեղ, որտեղ ի սկզբանե թաղված էր շան գլուխը: 1992 թ. մարտի 24-ին ԵԱՀԿ խորհրդաժողովը Հելսինկիում գումարեց նախարարների խորհրդի լրացուցիչ, արտահերթ հանդիպումը, ուր որոշում ընդունվեց, որ ԵԱՀԿ-ն լուրջ դեր պետք ստանձնի Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հարցում: Այդ հանդիպմանը որոշում ընդունվեց հնարավորինս կարճ ժամկետում հրավիրել Մինսկի խորհրդաժողով, ուր եւ կվճռի Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Մինսկի խմբում ընդգրկված երկրների թիվը այդ խորհրդաժողովում 11 էր, այսօր արդեն խումբը վերածվել է եռանախագահության:

ԵԱՀԿ դերի աշխուժացման ցանկությունը կրկվեց նաեւ 1994 թ. դեկտեմբերի 4-5-ին Բուդապեշտում կայացած Մինսկի խմբի խորհրդաժողովի ժամանակ: 94 թ. մայիսին հրադադարի հաստատումից հետո բուդապեշտյան համաժողովը կոչ էր անում կողմերին պահպանել հրադադարը, սկսել բանակցությունները: Միաժամանակ խորհրդաժողովը գոհունակություն էր հայտնում միջնորդական առաքելությունների վերաբերյալ: Խորհրդաժողովը առաջարկում էր կյանքի կոչել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւերը: 1993 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ի ընդունած թիվ 822 բանաձեւը կոչ էր անում հարգել միմյանց տարածքային անձեռնմխելիության եւ ինքնիշխանության պահպանման իրավունքները:

Ղարաբաղի կարգավիճակի մասին Մինսկի խումբը որեւէ առաջարկ չէր ներառում: Կարգավիճակի խնդիրն այն քարն էր, որին մշտապես գայթում է Մինսկի խումբը:

Մինչ Մինսկի խումբը պատեպետ էր զարնվում՝ Անդրկովկասի տարածաշրջանային ֆիզիկական քարտեզը լուրջ վերծեւումների էր ենթարկվում: Ադրբեջանի ռազմական պարտությունները խառնել էին մինչեւ անգամ կարգավորմամբ շահագրգիռ երկրների խաղաքարտերը: Կարգավիճակի հարցը դառնում էր գրեթե անլուծելի խնդիր: Ռազմական իրողությունները թելադրում էին իրենց պայմանները: Միջազգային կարգավորողները դուրս էին մղվում կարգավորման գործընթացից: Ամեն ինչ այդքան պարզ եւ առավել եւս՝ դյուրին չէր, որքան թվում էր առաջին հայացքից:

Համանախագահողների վերջին խարիսխը հանգում էր հակամարտող երկրների տնտեսական իրավիճակի վատթարացմանը: Պատերազմը հյուծել էր Ղարաբաղին, Հայաստանին, Ադրբեջանին: Պետք էր գտնել բացատրությունը եւ մատնացույց անել այն փուշը, որը կարելի էր խոթել աչքը: Նրանք Հայաստանի քաղաքական ղեկավարությունից պահանջում էին Ղարաբաղը հանձնել առանց նախապայմանների, սակայն տնտեսական հեռանկարի խոստման դիմաց: Խայծը նետված էր, Լեւոն Տեր-Պետրոսյանն այն կուլ էր տվել:

ՀՀ ժամանակի գործող վարչապետ, ԼՂՀ 1-ին նախագահ Ռոբերտ Քոչարյանը 97-ին համոզված էր, որ երկրի տնտեսական վիճակի վատթարացումը բնավ էլ պայմանավորված չէ ղարաբաղյան հիմնախնդրի գոյությամբ: Ռոբերտ Քոչարյանի համար այլ բան էր պետք մտածել, ինչը եւ գտնվեց. կարգավորման սկզբունքների գաղտնիության պահպանման պահանջ եւ դրանց շուտափույթ եւ անցնցում իրականացնելու խոստում: Ղարաբաղին ընտրության հնարավորություն չէր մնում: Արագ եւ անաղմուկ:

Եվ նոր սկզբունքների իրագործման արդյունքունմ Ղարաբաղը մի օր իրեն կարող է վերստին տեսնել Ադրբեջանի ճանկերում:

Եվ եթե Տեր-Պետորոսյանն անկեղծորեն խոստովանում էր, որ կարգավորման սկզբունքերին եւ բանակցային գործընթացին տեղյակ են ընդամենը վեց մարդ, ապա Քոչարյանը չի խոստովանում, որ նոր սկզբունքների մասին Հայաստանում տեղյակ են չորս մարդ՝ ինքը՝ Ռոբերտ Քոչարյանը, Վարդան Օսկայանը, Սերժ Սարգսյանը եւ Արթուր Բաղդասարյանը: Եվ յուրաքանչյուրն ունի սկզբունքների կենսագործման իրեն վերապահված դերակատարումը:

Փորձված աղվեսն անգամ երկու ոտքով է հայտնվում թակարդում: Եվ Յալթայի վերջին համաժողովի ժամանակ, պատասխանելով Ադրբեջանի լրագրողի հարցին, թե «ե՞րբ եք մտադիր վերադարձնել գրավյալ տարածքները», Քոչարյանը պատասխանում է, որ եթե Ադրբեճանը ստորագրած լիներ քիվեսթյան փաստաթուղթը, ապա «հարցը լուծված կլիներ»:

Նոր սկզբունքերի՝ հին փաթեթավորմամբ փուլային տարբերակի վատթար կրկնությունն է՝ նախեւառաջ փախստականների եւ ազատագրված տարածքների վերադարձ:

Շարունակությունը՝ հաջորդ համարում